ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՕՍՔ «ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ

Այսու Հայրապետական գրով ջերմօրէն կ'ողջունենք Ձեզ, որ համահաւաքուած էք քաղաքամայր Երևանի մէջ, քննարկելու համար Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն դուրս գտնուող հայկական պատմամշակութային ժառանգութեան ուսումնասիրման և պահպանութեան խնդիրները:

Մենք իբրև Հայոց Հայրապետ կը գնահատենք «Մէկ ազգ մէկ մշակոյթ» փառատոնի շրջագծի մէջ տեղի ունեցող այս գիտաժողովը և մեր օրհնութեան խօսքը կ'ուղղենք Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի, երիտասարդութեան հարցերի և սպորտի նախարարութեան և Հայաստանի Հանրապետութեան Պատմութեան և մշակոյթի յուշարձանների պահպանութեան վարչութեան և կազմակերպիչ այլ մարմիններու այս նախաձեռնութեանը, որ թէև ուշ, և սակայն հեռատես և պատասխանատու այս յանձնառութեամբ, համայն աշխարհի հայութեան և նաև քաղաքակիրթ մարդկութեան ուշադրութեան առարկայ կը դարձնէ մեր ժողովուրդի ստեղծագործ հանճարի արգասիքը հանդիսացող պատմական յուշարձաններու, վանքերու և եկեղեցիներու ուսումնասիրութեան և պահպանութեան հարցերը:

Բայց, նախ կ'ուզենք յիշատակել այն փաստը, որ Հայաստանի պետութիւնը, խորհրդային շրջանի ամենէն դժուարին և դաժան տարիներուն անգամ, հոգ չէ թէ տարբեր հասկացութիւններով, իր ուշադրութեան առարկայ դարձուց հին եկեղեցիներու և յուշարձաններու նորոգութիւնն ու պահպանութիւնը, յաճախ իսպառ կործանումէ և անհետացումէ փրկելով անոնցմէ ոմանը:

Եւ եթէ Հայաստանի մէջ զանազան կերպերով և մակարդակներով կը պահպանուէին մեր եկեղեցիները, նոյն այդ ժամանակներուն, տարբեր ճակատագիր կը վերապահուէր արտերկրի մեր վանքերուն և եկեղեցիներուն: Ծայրագոյն Արևելքի մէջ, անտարբերութեան, և կամ հայ համայնքներու

անդամներու տեղաշարժին հետևանքով անտէր և անխնամ մնացին շատ մը եկեղեցիներ, յատկապէս Հնդկաստանի և Ինտոնեզիայի մէջ:

Իսկ անդին, Արևմտեան Հայաստանի ողջ տարածքին, անտես, անշուք և լքուած մնացին հարիւրաւոր եկեղեցիներ և վանքեր: Երբ փորձինք կարդալ ցուցակը այն բոլոր վանքերուն, որոնք տակաւին 1915 թ. կանգուն էին, պարզապէս կը սահմոկինք, երբ կ՚անդրադառնանք, թէ ի՞նչ եղաւ անոնց ճակատագիրը: Հրդեհի զոհ գացին, թնդանօթներու երախին կուլ գացին, կամուրջ և տուն կառուցելու համար քար առ քար խողխողուեցան այդ քարերը: Ամենատես Աստուած միայն գիտէ, թէ ինչ դժուարին ճակատագրի առարկայ դարձան Մշոյ Սուրբ Կարապետը, Կեսարիոյ Սուրբ Կարապետը, Վարագայ վանքը, և միւս վանքերը, միւս տաճարները, միւս աղօթարանները: Եւ ինչ ըսել գերեզմաններու սրբապղծման, որուն զոհ գացին մեր սուրբ հայրերու գերեզմանները, Հայոց աշխարհի ամէն կողմը՝ Դարանաղեաց գաւառէն մինչև Կիլիկիա և մինչև Անի և Վասպուրական աշխարհ: Ամբողջ երկիր մը աւերակի վերածուեցաւ, և հսկայ գանձեր մնացին երկրի երեսին, երկրի ընդերքին:

1915 թ. տեղահանութեան օրերու, Մուշի և Վասպուրականի գաղթական հայերը իրենց ուսերուն շալկեցին Մշոյ ճառընտիրը, հարիւրաւոր ձեռագրեր և յաջողեցան հասցնել Հայաստան և դարերու ժառանգ թողուլ զանոնք, բայց անոնք չէին կրնար Վարագայ Ս. Նշանը իրենց ուսերուն բարձած Արարատեան դաշտ հանել: Եւ ահա թէ ինչու ճարտարապետական հրաշալիքներ ամբողջութեամբ ոչնչացուեցան:

Բայց շատ բան կայ տակաւին փրկելիք: Մենք կը հաւատանք, որ Անիի տաճարները, Աղթամարը, շատ ուրիշ եկեղեցիներ պիտի փրկուին: Ա՛յս է մեր պահանջը, ա՛յս է համաշխարհային քաղաքակրթութեան պահանջը, ա՛յս է 21-րդ դարու նայող մարդու պահանջը: Միւս կողմէ, չմոռնանք, որ ամբողջ աշխարհով մէկ հայկական գաղթականութիւն ունինք, հարիւրաւոր երկիրներ: Հայը ուր գաղթեր էր, ո՛ւր որ գացեր էր՝ իր եկեղեցին էր կառուցել... Սինկապուրէն մինչև Եգիպտոս, Երուսաղէմ, Խրիմ, Լեհաստան, Հնդկաստան և Ռումանիա.... ո՞ր երկրի մէջ հայ չկար, ո՞ր երկրի մէջ հայը եկեղեցի չէր կառուցած: Բայց ո՞վ գիտէ անոնց մասին: Ո՞վ պէտք է ուսումնասիրէ, քննէ, արձանագրէ այդ բոլորը: Ո՞վ մեր ժողովուրդի զաւակներուն պիտի ճանչնալ տա Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքը, Ռումանիոյ Հաճկատարը... ահա թէ ինչքան մեծ գործ կայ անելիք, և ահա թէ ինչու ձեր այս գիտաժողովը մեզի համար կարևորագոյն միջոցառում մըն է՝ ուսումնասիրելու համար արտերկրի մեր պատմամշակութային յուշարձանները,

եկեղեցիները, վանքերը և այն բոլորը, որոնք մեր ազգի հաւաքական հարստութիւնն են և մեր ժառանգութիւնը երրորդ հազարամեակը ողջունող մեր զաւակներուն:

Բարձրօրէն կը գնահատենք Ձեր տարած այսօրուայ աշխատանքը: Ձեր ձեռքերը թող ըլլան միշտ թարմ և ուժեղ, ստեղծարար և տոկուն:

Ողջ լերուք ի Տէր զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի մէնջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

21 Մայիս 1999 թ.
ի Ս. Էջմիածին